

ՀԱՄԱՆՈՒՆ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՄԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Համանուն բառերը ծնով նույն, սակայն իմաստով տարբեր բառեր են: Համանունությունը լինում է լիակատար և մասնակի: Այն համանունները, որոնք պատկանում են նույն խոսքի մասին և համընկնում են քերականական բոլոր ձևերում, կոչվում են լիակատար, իսկ նրանք, որոնք պատկանում են տարբեր խոսքի մասերի կամ որևէ բառի ուղիղ ձևի և մեկ այլ բառի թեքված ձևի համընկումներ են, կոչվում են մասնակի համանուններ: Մասնակի համանունները լինում են համահունչ, համադիր և հարանուն: Ըստ ծագման համանունները լինում են տարարմատ և համարմատ: Համարմատ են այն համանունները, որոնք ծագել են միևնույն արմատից, իսկ տարբեր արմատներից ծագած համանունները տարարմատ համանուններ են: Համանունություն կարող է լինել ոչ միայն բառերի, այլ նաև քերականական ձևերի միջև: Այս հանգամանքից կախված՝ համանունները լինում են բառային, բառաքերականական և քերականական:

Համանունության երևույթը առկա է ոչ միայն առանձին բառերի ոլորտում, այլ նաև՝ դարձվածքային միավորների: Սակայն բառային համանունության համեմատությամբ դարձվածքային համանունությունը խիստ սահմանափակ է և տարածվում է սահմանափակ թվով դարձվածքների վրա: Հարկ է նշել, որ, եթե բառերի համանունությանն անդրադարձ է կատարվում բառագիտությամբ զբաղվող հայ և օտարազգի բազմաթիվ հեղինակների գործերում, ապա դարձվածքային համանուններին նվիրված աշխատանքները հայ և ռուս լեզվաբանական գրականության մեջ սահմանափակ են, իսկ անգլալեզու գրականության մեջ դրանք բացակայում են, իսկ նրանցից Ի. Ա. Նիդան, Ֆ. Փալմերը, Ստ. Ուլմանը և այլք անդրադարձել են միայն բառային համանուններին: Նշենք նաև, որ ժամանակակից բառարաններում համանուն դարձվածքները տարանջատված չեն, դրանք սովորաբար դիտարկվում են որպես բազմիմաստ դարձվածքներ:

Սույն հոդվածի նպատակը հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ գույների ու մարմնի մասերի անվանումներ պարունակող համանուն դարձվածքների գուգադրական ուսումնասիրությունն է:

Համանուն են կոչվում այն դարձվածքները, որոնք բացարձակապես նույնն են իրենց հմչունաբառային կազմով, ունեն տարբեր իմաստներ և ժամանակակից լեզվաըմբռնողությամբ գիտակցվում են իբրև տարբեր դարձվածքային միավորներ¹:

Ինչպես բառային համանունների, այնպես էլ դարձվածքային համանունների առաջացման աղբյուրներն ու ուղիները տարբեր են: Դիտարկվող երեք լեզուներում դրանց առաջացման հիմնական ուղին դարձվածքի բազմիմաստությունն է: Երբեմն բազմիմաստ դարձվածքի իմաստներից մեկն այնքան է հեռանում դարձվածքի հիմնական իմաստից, որ խախտվում է բազմիմաստ դարձվածքի իմաստային-տրամաբանական կապը, և նախկին իմաստը համարվում է ինքնուրույն դարձվածք իր իմաստով, օրինակ՝ երեսի ջուր - 1) պատվի զգացում, 2) երեսի ջուր - հարսնության զարդեր, զգեստներ, որ փեսացուն ուղարկում է հարսնացուին հարսանիքից առաջ: Իմաստների միջև կապող օղակն այն է, որ փեսան պատվի զգացումից դրդված է նվերներն ուղարկում, կամ ձեռն ու ոտը կապել (զրկել գործելու, աշխատելու հնարավորությունից) դարձվածքի նմանողությամբ ժողովուրդն օգտագործում է ձեռն ու ոտը կապել դարձվածքը, երբ ցանկանում է տղային տան ու ընտանիքի հետ կապել, իսկ հետագայում, անկախ առաջին իմաստից, «ամուսնացնել» բառի փոխարեն կատակով օգտագործվում է ձեռն ու ոտը կապել դարձվածքը, որը և դառնում է առաջին դարձվածքի համանունը և այլն:

Բերենք մի քանի համանուն դարձվածք հայերենում, ռուսերենում և անգլերենում:

- Գլխով անցնել (1. մտածել, ծրագրել: 2. բաղձալ, տենչալ) - գլխով անցնել (պատահել, հանդիպել (կյանքում)):
- Ձեռք տալ (1. օգնել, սատարել, 2. ձեռքը սեղմել՝ ի նշան բարեկամության, 3. բարեկ) - ձեռք տալ - (1. մեկին դիպչել, նեղացնել, վնասել, 2. խլել, յուրացնել) - ձեռք տալ - (1. ձեռնտու, շահավետ լինել, 2. փոխադարձ համաձայնության գալ):

Հոգվածում տեղ գտած դարձվածքներն ու նրանց բացատրությունները քաղված են հետևյալ բառարաններից՝ ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1969-1980, Սուքիասյան Ս., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, 1912: Англо-русский фразеологический словарь (составил А. В. Кунин), т. 1-2, М., 1967, Фразеологический словарь русского языка, под ред. А. И. Молоткова, М., 1978, Д. И. Квеселевич, Русско-английский фразеологический словарь, М., 1998, Brewer's Dictionary of Phrase and Fable, London, 1956, The Old English Dictionary, vol. 1-2, Oxford, 1961

¹ Սուքիասյան Ս. Ժամանակակից հայոց լեզու. - Եր., 1982. - էջ 357:

- Մի բերան (1. մի փոքր, մի քիչ, 2. մեկ անգամ) - մի բերան (անվերջ, անդադար, նույն բանը կրկնելով) - մի բերան (խոսքը մեկ արած, միաձայն):
- Գլուխ բերել (հաջողացնել) - գլուխ բերել (պարծենալ):
- Սև սատանա (սևամորթ, խափշիկ) - սև սատանա (չար, խորամանկ, բանասարկու):
- Կանաչի ընկնել (գարնանամուտին սկսել արածել) - կանաչի ընկնել (ստամոքսի խանգարում ունենալ):
- Поставить на ногу (բուժել) - поставить на ногу (դաստիարակել) - поставить на ногу (ստիպել ակտիվորեն գործել) - поставить на ногу (անհանգստացնել):
- Отвести глаза (ուշադրությունը շեղել) - отвести глаза (հայացքը հեռացնել):
- За глаза (մեկի բացակայությամբ, գաղտնի) - за глаза (միանգամայն):
- Black and tan (խմիչք) - black and tan (և սպիտակամորթներին, և սևամորթներին սպասարկող (օր.՝ ռեստորանում)) - black and tan - (շան տեսակ):

Համանուն դարձվածքներ առաջանում են նաև ծագումնաբանության հիման վրա: Միննույն բաղադրիչներ ունեցող դարձվածքն արտահայտում է տարբեր ծագումով պայմանավորված տարբեր հասկացություններ: Այսպիսի դարձվածքները գիտակցվում են որպես ձևով նույն, սակայն բովանդակությամբ տարբեր դարձվածքներ², օրինակ՝

- Կաշվից դուրս գալ (ամեն ջանք թափել) - կաշվից դուրս գալ (իր չափը չճանաչել):
- Կռնակը շոյել (ծեծել) - կռնակը շոյել (շողոթորթել, կեղծավորություն անել):
- Աչքից զգել (սիրալիր վերաբերմունքից զրկել) - աչքից զգել (տեսադաշտից կորցնել):
- Սիրտ ունենալ (տրամադրություն ունենալ) - սիրտ ունենալ (գութ ունենալ):
- Կուրծք տալ (կրծքով կերակրել) - կուրծք տալ (դիմադրել, պաշտպան կանգնել):

² Шанский Н. М. Фразеология современного русского языка. М., 1958. - 44 с.

- Թաթ ու կրունկ լինել (մաշվել) - **Թաթ ու կրունկ լինել** (շտապ գործողությունների դիմել):
- Սև քար (ոչինչ, ոչ մի բան) - **սև քար** (վանք, եկեղեցի):
- Կարմիրը կապել (ամուսնացնել) - **կարմիրը կապել** (սպանել):
- Зеленая улица (ազատ ուղի) - **зеленая улица** (պատժի տեսակ):
- Протереть глаза (արթնանալ) - **протереть глаза** (սնանկանալ):
- Показывать нос (զալ, հայտնվել կարծ ժամանակով) - **показывать нос** (ծաղրել):
- Гладить по головке (զովել, քաջալերել) - **гладить по головке** (պատասխանատվության ենթարկել):
- Lay (one's) hand on (մեկի հանդեպ բռնություն գործադրել) - **lay (one's) hand on** (զտնել, ձեռք բերել) - **lay (one's) hand on** (մեկին հոգևորական աստիճան տալ):
- Put in sb's hands (մեկին հավատացնել ինչ-որ բանում) - **put in sb's hands** (մեկի տրամադրության տակ դնել):
- Make sb's mouth water (ախորժակը գրգռել, հետաքրքրությունը շարժել) - **make sb's mouth water** (մեկի նախանձը շարժել):
- At heart (սրտի խորքում) - **at heart** (ըստ էության, իրականում):
- Be on sb's back (մեկի հանդեպ բռնախնդիր լինել) - **be on sb's back** (մեկի խնամքի տակ լինել):
- Get under sb's skin (ազդել նյարդերի վրա) - **get under sb's skin** (հրապուրել մեկին, գլուխը պտտեցնել):

Համանուն դարձվածքներ կարող են առաջանալ նաև հոլովների շփոթությունից և հոլովական կիրառությունից: Դարձվածքներում բառերը հանդես են գալիս տարբեր հոլովներով: Այս հանգամանքը համանուն դարձվածքների առաջացման աղբյուր է, օրինակ՝ դարձվածքներում ուղղական և հայցական հոլովներով գործածվող բաղադրիչները նմանվում են միմյանց, և այն դարձվածքները, որոնց մյուս բաղադրիչները միաժամանակ համընկնում են բառակապակցության հետ, համատեքստից դուրս իրարից չեն տարբերվում, չնայած նրանք համանուններ են³: Սա հատկապես նկատելի է հայերենում: Ռուսերենում այս կարգի համանուն դարձվածքներ մեզ չեն հանդիպել, իսկ անգլերենում շարահյուսական կապերն արտահայտվում են նախդիրներով: Բերենք մի քանի դարձվածք հայերենում՝

³ Գևորգյան Ե. Հայերենի դարձվածքները. - Եր., 1969. - էջ 109:

ա) ծեռքը բռնել(հայցական – ուղիղ խնդիր) - արգելել, խոչընդոտել:

բ) ծեռքը բռնել (ուղղական հոլով - ենթակա) – կարողանալ մի բան անել:

ա) աչքը առնել (ուղղական հոլով - ենթակա) – մի բան տեսնել:

բ) աչքը առնել (հայցական – ուղիղ խնդիր) – շլացում, կուրացում՝ ծյանը մայելիս:

Երբեմն տարբեր դարձվածքներում գործածվում են միևնույն բառերի բազմիմաստությունները: Մյուս բաղադրիչների նույնության դեպքում առաջանում են համանուն դարձվածքներ, օրինակ՝ գլուխ պահել (ապրել) դարձվածքում *պահել* բառն ունի *պահպանել* իմաստը, իսկ գլուխ պահել – (ծուլություն անել, վատ աշխատել) դարձվածքում՝ իրեն ջանք թափելուց ետ պահելու իմաստը: Գլուխ բառի ընդհանրությամբ առաջացել է համանուն դարձվածք: Ականջը կտրել (ամուսնացնել) դարձվածքում *կտրել* բառն ունի *հատել* իմաստը, իսկ ականջը կտրել (խնդրելով ծանօթացնել) դարձվածքում՝ *կպած լինելու, չհեռանալու* իմաստը կամ սիրտը բացել անկեղծանալ և սիրտը բացել ուրախանալ դարձվածքներում *բացել* բառը մի դեպքում նշանակում է *սրտի եղածն ասել*, մյուս դեպքում՝ *հրճվանք ապրելու* իմաստը և այլն:

Հայերենի բազմաթիվ դարձվածքներում իմաստազատիչ դեր ունի որոշյալ հոդը՝

- Աչք առնել (չար աչքի գալ) - աչքը առնել (շլանալ):
- Չեռք բռնել (օգնել) - ծեռքը բռնել (արգելել):
- Սիրտ առնել (համարձակություն ստանալ) - սիրտը առնել (ամոքել):
- Աչքի ընկնել (նշանավոր՝ նկատելի լինել, որևէ առանձնա-հատկությամբ ուշադրություն գրավել) - աչքին ընկնել (նկատվել, երևալ):
- Գլուխ գալ (իրագործվել, հաջողվել, ավարտվել) - գլուխը գալ (մեկին անսպասելի մի բան պատահել):
- Սև կապել (սգալ, սգավոր դառնալ) - սևը կապել (մեռցնել, ոչնչացնել, մի բանից զրկել):
- **Black hand** (1. սիցիլիական շանտաժիստների խմբի անդամ, 2. որևէ նման գաղտնի կազմակերպություն) - **the black hand** (գանգստերական խմբի անուն):

Ինչպես նկատում ենք, բերված զույգերում դարձվածքներից մեկն օգտագործվում է որոշիչ հոդով: Անհոդ և հոդավոր դարձվածքներն օժտված են տարբեր իմաստներով: Այս դարձվածքները կոչվում են հարանուն դարձվածքներ: Բառային հարանունների պես, հարանուն դարձվածքները կառուցվածքով, ձևով և իմաստով մի կողմից՝ առնչվում ու հարաբերակցվում, մյուս կողմից՝

երբեք չեն նույնանում և իրարից տարբերվում են և արտահայտությամբ, և բովանդակությամբ: Այս դարձվածքներն ուսումնասիրելիս նկատում ենք նաև, որ անհող ձևերի բաղադրիչներն ավելի սերտ են կապված իրար հետ, քան հողավոր ձևերի բաղադրիչները⁴:

Բնական է, հողի օտարման դեպքում գործ կունենանք միևնույն դարձվածքի հետ:

Համանուն դարձվածքների շարքում խիստ հազվադեպ են այնպիսիք, որ ունեն իրենց համարժեք համանուն դարձվածքները մյուս դիտարկվող լեզուներում, ընդ որում, հարկ է նշել, որ երբեմն դրանք համարժեք համանուններ կարող են համարվել միայն որոշ իմաստներով:

- աչքերը փակել (մեռնել) - աչքերը փակել (քնել)- աչքերը փակել (միտումնավոր չտեսնելու տալ)

закрывать глаза (մեռնել) - закрывать глаза (քնել) - закрывать глаза - (միտումնավոր չտեսնելու տալ)

close one's eyes (քնել) - close one's eyes to sth (միտումնավոր չտեսնելու տալ)

- ոտքի կանգնեցնել (բուժել) – ոտքի կանգնեցնել (դաստիարակել, օգնել տնտեսական վիճակը բարելավելու, գործը կարգի գցել)- ոտքի կանգնեցնել (դրդել ապստամբության)

поставить на ноги (բուժել) - поставить на ноги (դաստիարակել, օգնել՝ տնտեսական վիճակը բարելավելու) - поставить на ноги (ստիպել ակտիվորեն գործել) - поставить на ноги (անհամաձայնացնել)

- քթի տակ (շատ ցածրաձայն) – քթի տակ (շատ մոտիկ, կողքին)

- под нос (ցածրաձայն) – под нос (շատ մոտ, կողքին)

под нос (ցածրաձայն) – под нос (շատ մոտ, կողքին)

Ուսումնասիրելով համանուն դարձվածքները՝ նկատում ենք, որ

ա) դիտարկվող լեզուներում հանդիպում են մի շարք համանուն դարձվածքներ: Դրանք ավելի մեծ թիվ են կազմում հայերենում, ավելի հաճախ հանդիպում են երկանդամ, երբեմն եռանդամ դարձվածքներ: Անգլերենում և ռուսերենում դրանցից մի քանիսը նախդրավոր են, դարձվածքների մեծ մասը բայական դարձվածքներ են:

⁴ Սարգսյան Ա. Ժամանակակից հայոց լեզու. - Եր., 1990., էջ 340:

բ) համանուն դարձվածքների առաջացման աղբյուրները տարբեր են: Դրանք բառերի բազմիմաստության, ժազման տարբերությունների, հոլովները չփոթելու, միևնույն բառերի բազմիմաստությունների արդյունք են:

գ) հայերենում և հազվադեպ նաև անգլերենում առկա են հարանունային դարձվածքներ, որոնցում որոշյալ հոդն ունի իմաստազատիչ դեր: Անգլերենում իմաստազատիչ դեր ունեն դերանունները:

դ) դիտարկվող լեզուներում համարժեք համանուն դարձվածքները խիստ սակավաթիվ են. և հարկ է նշել, որ երբեմն դրանք համարժեք համանուններ կարող են համարվել միայն որոշ իմաստներով: Ասվածից հետևում է, որ յուրաքանչյուր լեզվի համանուն դարձվածքները հատուկ են տվյալ լեզվին, մի հանգամանք, որ վկայում է այդ լեզուն կրող ժողովրդի լեզվամտածողության յուրահատկությունների մասին:

PHRASEOLOGICAL HOMONYMS IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH

Homonymy can be found not only in the sphere of lexical but also among phraseological units. Phraseological homonyms are the units which have identical phonetic components, but are quite different in meaning. They are recognized as different units.

The present paper studies and compares the peculiarities of homonymic phraseological units with components of colours and body parts in Armenian, Russian and English.

The main sources of phraseological homonyms are polysemy, differences in origin, mixing the cases (in Armenian).

Investigations show that phraseological homonyms are much fewer than lexical homonyms. There are more homonymic phraseological units in Armenian than in the other languages considered. In Armenian, the definite article has a meaning-distinguishing role.

Phraseological homonyms having their equivalents in other languages are very few, and sometimes they can be considered equivalent homonymic units by only some of their meanings. That means that the units mentioned are peculiar to this or that language. This fact, in its turn, speaks about the peculiarities of linguistic thinking of the people speaking the given language.